



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
05 դեկտեմբերի 2023 թ.

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ՝ ՕՐԵՆՔԻ
ՈՒԺՈՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԹԻՎ 15 ՆԻՍՏԻ**

Ալավերդի համայնքի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 05-ին ժամը 10:00-ին օրենքի ուժով հրավիրված թիվ 15 նիստին մասնակցում էին թվով 14 ավագանու անդամներ: Ավագանու նիստից բացակայում էին համայնքի ղեկավար և ավագանու անդամ Արկադի Թամազյանը, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ և համայնքի ավագանու անդամ Տիգրան Պապոյանը, Նարինե Թորոսյանը, Անդրանիկ Թամազյանը, Անահիտ Բաղայանը, Գայանե Այվազյանը, Մանվել Ռամազյանը, Թագուհի Վարդանյանը, Լաուրա Մելիքսեթյանը, Արամ Ռամազյանը, Արթուր Դավթյանը, Սենիկ Չերչինյանը, Աբել Տիտանյանը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ավագանու նիստից բացակայում էին համայնքի ղեկավարը և առաջին տեղակալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Ալավերդի համայնքի ավագանու՝ 05 դեկտեմբերի 2023 թվականի՝ օրենքի ուժով հրավիրված նիստը վարում էր ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը՝ Միմոն Չախարովը:

Քանի որ հրավիրված նիստից բացակայում էր Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, ապա Միմոն Չախարովի առաջարկությամբ և նիստին ներկա գտնվող ավագանու անդամների համաձայնությամբ (ԿՈՂՄ-14) ավագանու նիստն արձանագրելու իրավունքը տրվեց Ալավերդի համայնքի ավագանու անդամ Հարություն Չավարյանին:

Մինչ նիստի օրակարգին անցնելը Միմոն Չախարովը հայտարարեց, որ համայնքի ավագանու 27 անդամներից նիստին ներկա են 14-ը՝ քվորումն ապահովված է, և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ՝ 05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ՝ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ
ԹԻՎ 15 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝
ավագանին որոշում է.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 05 դեկտեմբերի 2023 թվականի՝ օրենքի ուժով հրավիրված թիվ 15 նիստի հետևյալ օրակարգը :

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ ՂՈՒՄԱՇՅԱՆԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԿՈՂՄ - 14 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց /ՈՐՈՇՈՒՄ N - Ա/

Օրակարգն ընդունվելուց հետո ներկայացվեց որոշման նախագիծը.

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ ՂՈՒՄԱՇՅԱՆԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մինչ գաղտնի քվեարկությանն անցնելը, Սիմոն Չախարովն առաջարկեց ավագանիներին ստեղծել ավագանու ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով, որը կկազմակերպի քվեաթերթիկները հաշվելու գործընթացը: Ավագանու անդամների համաձայնությամբ և ցանկությամբ որոշվեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի անհատական կազմը՝ բաղկացած հետևյալ անդամներից՝

- 1) Դալլաբյան Արեն (Քաղաքացիական պայմանագիր խմբակցություն),
- 2) Երիցյան Արմինե (Քաղաքացիական պայմանագիր խմբակցություն),
- 3) Սմբատյան Անահիտ (Քաղաքացիական պայմանագիր խմբակցություն)

Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորվելուց հետո Սիմոն Չախարովը կազմակերպեց գաղտնի քվեարկության գործընթացը:

Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կողմից հրապարակային քվեաթերթիկները քվեատուփից հանվեց, արդյունքները հայտարարվեց: Անվավեր քվեաթերթիկներ 0, դեմ 0, ձեռնպահ 0 և կողմ 14:

Անցկացված գաղտնի քվեարկությամբ՝ քվեաթերթիկների միջոցով, ավագանու յուրաքանչյուր անդամին հասանելի մեկ ձայնով (14 կողմ) որոշվեց Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավար Արկադի Թամազյանին անվստահություն հայտնելու և Ալավերդի համայնքի ավագանու անդամ Դավիթ Գեղամի Ղումաշյանին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավար ընտրելու հարցը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 68-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի *ավագանին որոշում է.*

1. Անվտանգությունն հայտնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավար Արկադի Սամվելի Թամազյանին

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավար ընտրել Ալավերդի համայնքի ավագանու անդամ Դավիթ Գեղամի Ղուլմաշյանին:

ԿՈՂՄ - 14 ԴԵՄ - 0 ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց /ՈՐՈՇՈՒՄ N - Ա/

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ

ԵՐԻՑՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՉԱԽԱՐՈՎ ՍԻՄՈՆ

ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ ՖԼՈՐԱ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՐԱՆՏ

ՉԱՎԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԼՅԱՆ ՀԱՍԼԵՏ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ՋԱՆԻՆՅԱՆ ԱՄՐԱՍՏԱՆ

ՄԱՐԳՍՅԱՆ ԼՈՐԱ

ՍՄԲԱՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀԱՅԿ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

ՍԻՄՈՆ ՉԱԽԱՐՈՎ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԱՎԱՐՅԱՆ